ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
PRESIDENT OF THE REPUBLIC OF ARMENIA

Երևան, 25 մարտի 2021թ.

Ձերդ Գերազանցություն,

Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ և հույն եղբայր ժողովրդին Հունաստանի Հանրապետության ազգային տոնի՝ Անկախության օրվա և Օսմանյան Թուրքիայի լծից ազատագրման 200-րդ տարեդարձի կապակցությամբ:

Հերոսական մաքառումների, երկարատև պայքարի ու զոհողության գնով հույն ժողովուրդը նվաճեց իր անկախությունը: Այդ ճանապարհին բազմաթիվ են Օսմանյան տիրապետության տակ գտնվող հայ և հույն քրիստոնյա բախտակից ժողովուրդների համագործակցության ու համատեղ պայքարի դրսևորումները՝ խարսխված հազարամյակների պատմամշակութային առնչությունների, ընդհանուր հոգևոր արժեքների և փոխադարձ համակրանքի վրա:

Վերջին տասնամյակների ընթացքում Հայաստանը և Հունաստանը կարողացել են զարգացնել ամուր միջպետական հարաբերություններ ու երկկողմ կայուն օրակարգ, որն ընդգրկում է ակտիվ քաղաքական երկխոսություն և համագործակցություն տարբեր ոլորտներում:

Նշանակալի է Հունաստանում կենսունակ հայ համայնքի և Հայաստանում հայ ժողովրդի սերն ու հարգանքը վայելող հունական համայնքի դերը մեր երկրների միջև հարաբերությունների առավել սերտացման գործում:

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ
ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ԿԱՏԵՐԻՆԱ ՍԱԿԵԼԼԱՐՈՊՈՒԼՈՒԻՆ
ԱԹԵՆՔ

Վստահ եմ, որ մեր երկրների միջև ջերմ բարեկամական կապերը, անկեղծ և արդյունավետ համագործակցությունը այսուհետ ևս կզարգանան և կամրապնդվեն՝ ի շահ մեր ժողովուրդների:

Ընդունեք խնդրեմ, Ձերդ Գերազանցություն, խորին հարգանքիս հավաստիքը:

ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ